ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԱՊՁԲ-20-9-3

ք. Երևան 18.12.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե խախտվել են մատակարարման ժամկետները:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով. ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **79,885,388.40** (յոթանասունինը միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր ութսունութ դրամ, քառասուն լումա) ՀՀ դրամ, ընդ որում Վաճառողը բոլոր չափաբաժինների մասով վճարում է ԱԱՀ, բացառությամբ 10-րդ և 12-րդ չափաբաժինների: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Մատակարարված ապրանքների դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվելիք համապատասխան համաձայնագրով սահմանված կարգով:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:[2]

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված համաձայնագրով սահմանված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար

---

[2] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 27.09.2020թ.-ից հետո կողմերի միջև ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 2170021825580001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
	գործ. վստահագիր սակ. AH 0337548

Հավելված N 1
N ՄԱԱՊՁԲ-20-9-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համարը	CPV կոդը	CPV անվանումը	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Ընդ-հանուր քանակը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Մատակարարման	
									Ժամկետը	Հասցեն
1	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Էքստրակտ բուֆեր-1 NucliSens easyMag սարքի համար	Էքստրակտ բուֆեր-1 NucliSens easyMag սարքի համար, 4x1 լիտր, 2-30 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ	լրակազմ	**588,650.0**	**10**	**5,886,500.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ.	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
2	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Էքստրակտ բուֆեր-2 NucliSens easyMag սարքի համար	Էքստրակտ բուֆեր-2 NucliSens easyMag սարքի համար, 4x1 լիտր, 2-30 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ	լրակազմ	**246,075.0**	**10**	**2,460,750.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
3	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Էքստրակտ բուֆեր-3 NucliSens easyMag սարքի համար	Էքստրակտ բուֆեր-3 NucliSens easyMag սարքի համար , 4x1 լիտր, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ	լրակազմ	**294,325.0**	**6**	**1,765,950.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
4	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Բուֆեր լիզիս NucliSens easyMag սարքի համար	լիզիս բուֆեր NucliSens easyMag սարքի համար,4x1 լիտր, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ:	լրակազմ	**762,350.0**	**8**	**6,098,800.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
5	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մագնետիկ սիլիկա NucliSens easyMag 384 test	NucliSens easyMag մագնետիկ սիլիկա, նախատեսված NucliSens easyMag սարքի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ	լրակազմ	**1,129,050.0**	**15**	**16,935,750.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
6	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	NucliSens easyMag-ի միանգամյա ծախսանյութեր 384 տեստ	միանգամյա ծախսանյութ 384 տեստի համար, 15-25 աստիճան ջերմություն	լրակազմ	**1,158,000.0**	**15**	**17,370,000.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
7	33191310	փորձանոթներ	Էպենդորֆ	Միկրոցենտրիֆուգային փորձանոթներ պատրաստված պոլիպրոպիլենից, կափարիչով, 1.5 մլ, ԴՆԹազ, ՌՆԹազ, պիրոգեններ չպարունակող, գործարանային փաթեթավորված, փաթեթում մինչև 500 հատ	հատ	**11.52**	**20,000**	**230,400.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
8	33691167	լաբորատոր օժանդակ և	Նմուշառման ձողիկ	Քթըմպանից և կոկորդից վիրուսների նմուշառման ձողիկներ, ստերիլ,	հատ	**140.0**	**18,000**	**2,520,000.00**	4-րդ եռամսյակ,	ք. Աբովյան, Արզնու խճուղի,

		գիտական նյութեր		անհատական փաթեթավորված; ծողը պատրաստված է պոլիստիրենից, ծայրը՝ նայլոնից					բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	Կենտրոնական բժշկական բազա
9	33191310	փորձանոթներ	Ստերիլ պոլիստիրենե փորձանոթներ	Ստերիլ գլանաձև փորձանոթներ, պատրաստված պոլիստիրենից, չափսերը՝ 16 x 100 մմ, ծավալը՝ 10 մլ կափարիչով, նշումների համար նախատեսված պիտակով	հատ	**67.2**	**6,000**	**403,200.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
10	33191310	փորձանոթներ	Վակումային փորձանոթներ	Արյան նմուշառման ստերիլ փորձանոթ՝ մակարդման ակտիվացուցիչով և գել բաժանարարով: Փորձանոթի ծավալը՝ 5 մլ, չափսերը՝ 13x100 մմ: Կափարիչի տեսակը՝պտուտակավոր: Փորձանոթի վրա առկա է նմուշառման ծավալի նիշը և թվով նշված ծավալը, պատվիրման կոդը, լոթ համարը, պիտանելիության ժամկետը: Փորձանոթի վրա պիտակի առկայություն՝ պացիենտի անուն/ ազգանուն, նմուշառման ամսաթիվ գրելու հնարավորությամբ: Փորձանոթները նախատեսված են միայն in vitro ախտորոշման համար և ունեն CE (Conformité Européenne) սերտիֆիկատ:	հատ	**74.88**	**15,000**	**1,123,200.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
11	33691167	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Վակումային փորձանոթի ադապտոր	Վակումային փորձանոթի կցորդիչ՝ ստանդարտ, նախատեսված արյուն վերցնելու վակումային փորձանոթների համար: Փաթեթավորման վրա գրված է ապրանքային նշանը, ընկերության անվանումը, պատվիրման համարը, լոթը, ժամկետները, պահպանման պայմանները, CE (Conformité Européenne) սերտիֆիկատի առկայություն:	հատ	**19.2**	**15,000**	**288,000.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
12	33691167	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Վակումային փորձանոթ ասեղ	Ասեղ նախատեսված վակումային փորձանոթներով արյուն վերցնելու համար, 21G 1 1/2", ստերիլ: Ֆիրմային նշանի առկայություն և CE (Conformité Européenne) սերտիֆիկատի առկայություն:	հատ	**43.2**	**15,000**	**648,000.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
13	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Anti-SARS-CoV-2 թեստ հավաքածու,ներառյալ կալիբրատորներ	Էլեկսիս Anti-SARS-Cov-2 ընդհանուր հակամարմինների որոշման թեստ հավաքածու Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 200 որոշման թեստ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Միայն in vitro	լրակազմ	**290,000.0**	**75**	**21,750,000.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա

				ախտորոշման համար:						
14	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրեսիկոնտրոլ Anti-SARS-CoV-2	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Anti-SARS-Cov2 Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 4x1մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Միայն in vitro ախտորոշման համար:	լրակազմ	**48,250.0**	**3**	**144,750.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
15	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոսել չափող լուծույթ cobas e411	Էլեկսիս Պրոսել (Elecsys procell) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 6 x 380մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:	լրակազմ	**23,160.0**	**18**	**416,880.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
16	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կլինսել մաքրող լուծույթ cobas e411	Էլեկսիս Կլինսել (Elecsys Cleancell) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 6 x 380մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:	լրակազմ	**23,160.0**	**17**	**393,720.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
17	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոսել cobas e601	Լրակազմում 2x2 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	**50,870.4**	**3**	**152,611.20**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
18	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կլինսել cobas e601	Լրակազմում 2x2 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	**50,870.4**	**3**	**152,611.20**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
19	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրեքլին M	Լրակազմում 5x600 մլ քանակի, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	**42,230.4**	**3**	**126,691.20**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
20	33691420	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոբվոշ M	Լրակազմում 12x70 մլ քանակի, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	**32,640.0**	**1**	**32,640.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
21	33141223	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Ծայրադիրներ	Էլեկսիս ծայրադիրներ (Elecsys Assay tips) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 30x120=3600	լրակազմ	**45,542.4**	**8**	**364,339.20**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա

				ծայրադիր: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Միայն in vitro ախտորոշման համար					23.12.2020թ	
22	33141223	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կյուվետներ	Էլեկսիս միկրոկյուվետներ (Elecsys Assay cup) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 60x60=3600 միկրոկյուվետ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:	լրակազմ	**43,881.6**	**4**	**175,526.40**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
23	33141223	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կյուվետներ/ծայրադիրներ	Կյուվետներ/ծայրադիրներ նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: 48 x 84 ծայրակալներ, ներառյալ 8 թափոնների արկղ	լրակազմ	**175,437.0**	**2**	**350,874.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
24	33691162	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	Սիսվոշ լվացող կոնցետրատ	Էլեկսիս սիսվոշ (Elecsys Syswash) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 500 մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում:	հատ	**4,790.4**	**15**	**71,856.00**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա
25	33141223	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կլինլայներ աղբարկղ	Կլինլայներ աղբարկղ (Elecsys clean liner) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 14 հատ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 15-25°C ջերմաստիճանում:	լրակազմ	**22,339.2**	**1**	**22,339.20**	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 23.12.2020թ	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական բժշկական բազա

Ծանոթություն.
Ապրանքները պետք է ունենան՝
1. Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և/կամ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և/կամ որակի հավաստագիր:
4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/3-ը:
5. Ապրանքների մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:
6. Պահանջվող հավաստագրերը պետք է ներկայացվեն ապրանքի մատակարարման ժամանակ:

ԳՆՈՐԴ

ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ ՊՆ ԴՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱՐԵԿՈՍՅԱՆ

Հ/հ Ինդեքս
անվ. 4H0337548

Հավելված N 3
N ՄԱԱՊՁԲ-20-9-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՄԱԱՊՁԲ-20-9-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ՄԱԱՊՁԲ-20-9-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 19.12.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, հիմք ընդունելով 18.12.2020թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-20-9-3 գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 3.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարման ժամանակացույց՝ համաձայն N 1 Հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **79,885,388.40** (յոթանասունինը միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր ութսունութ դրամ, քառասուն լումա) ՀՀ դրամ, ընդ որում Վաճառողը բոլոր չափաբաժինների մասով վճարում է ԱԱՀ, բացառությամբ 10-րդ և 12-րդ չափաբաժինների: Համաձայնագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Համաձայնագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 1) նախատեսված չափերով, հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **25.12.2020**թ.-ը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ՄԱԱՊՁԲ-20-9-3 պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համարը	CPV կոդը	CPV անունը	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ այդ թվում՝
1	33691420/493	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Էքստրակտ բուֆեր-1 NucliSens easyMag սարքի համար	լրակազմ	588,650.0	10	5,886,500.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.
2	33691420/494	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Էքստրակտ բուֆեր-2 NucliSens easyMag սարքի համար	լրակազմ	246,075.0	10	2,460,750.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
3	33691420/495	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Էքստրակտ բուֆեր-3 NucliSens easyMag սարքի համար	լրակազմ	294,325.0	6	1,765,950.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
4	33691420/496	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Բուֆեր լիզիս NucliSens easyMag սարքի համար	լրակազմ	762,350.0	8	6,098,800.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
5	33691420/497	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մագնետիկ սիլիկա NucliSens easyMag 384 test	լրակազմ	1,129,050.0	15	16,935,750.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
6	33691420/498	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	NucliSens easyMag–ի միանգամյա ծախսանյութեր 384 տեստ	լրակազմ	1,158,000.0	15	17,370,000.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
7	33191310/10	փորձանոթներ	Էպենդորֆ	հատ	11.52	20,000	230,400.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
8	33691167/79	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Նմուշառման ձողիկ	հատ	140.0	18,000	2,520,000.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
9	33191310/11	փորձանոթներ	Ստերիլ պոլիստիրենե փորձանոթներ	հատ	67.2	6,000	403,200.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
10	33191310/12	փորձանոթներ	Վակումային փորձանոթներ	հատ	74.88	15,000	1,123,200.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
11	33691167/80	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Վակումային փորձանոթի ադապտոր	հատ	19.2	15,000	288,000.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
12	33691167/81	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Վակումային փորձանոթ ասեղ	հատ	43.2	15,000	648,000.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
13	33691420/499	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Anti-SARS-CoV-2 թեստ հավաքածու,ներառյալ կալիբրատորներ	լրակազմ	290,000.0	75	21,750,000.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
14	33691420/500	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրեսիկոնտրոլ Anti-SARS-CoV-2	լրակազմ	48,250.0	3	144,750.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան

								25.12.2020թ
15	33691420/501	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոսել չափող լուծույթ cobas e411	լրակազմ	23,160.0	18	416,880.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
16	33691420/502	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կլինսել մաքրող լուծույթ cobas e411	լրակազմ	23,160.0	17	393,720.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
17	33691420/503	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոսել cobas e601	լրակազմ	50,870.4	3	152,611.20	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
18	33691420/504	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կլինսել cobas e601	լրակազմ	50,870.4	3	152,611.20	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
19	33691420/505	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրեքլին M	լրակազմ	42,230.4	3	126,691.20	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
20	33691420/506	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոբվոշ M	լրակազմ	32,640.0	1	32,640.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
21	33141223/32	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Ծայրադիրներ	լրակազմ	45,542.4	8	364,339.20	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
22	33141223/33	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կյուվետներ	լրակազմ	43,881.6	4	175,526.40	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
23	33141223/34	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կյուվետներ/ծայրադիրներ	լրակազմ	175,437.0	2	350,874.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
24	33691162/118	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	Սիսվոշ լվացող կոնցետրատ	հատ	4,790.4	15	71,856.00	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
25	33141223/35	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կլինլայներ աղբարկղ	լրակազմ	22,339.2	1	22,339.20	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ԱՎՏՈՆՈՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
РА Департамент Автономных Государственных Закупок
Closed Joint-Stock Company
Concern-Energomash
01210095